ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 106-Ա

<<30>> օգոստոսի 2024 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի ՎՃՌՈՎ /ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾ՝ N ՇԴ/3732/02/16/՝ ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԴԱՆ ԱԳՈՒՆԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 2.81989 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԴԱՆ ԱԳՈՒՆԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ, 2-րդ մասի, 73-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2017 թվականի փետրվարի 8-ի վճիռը /քաղաքացիական գործ՝ N ՇԴ/3732/02/16/՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ձորակապ բնակավայրի վարչական տարածքում գտնվող /Հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Ձորակապ 3-րդ փողոց, 29/5 հողամաս/ արդյունաբերական նշանակության շինությունները ձեռքբերման վաղեմության ուժով քաղաքացի Վարդան Ագունի Սաղաթելյանի սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ, հաշվի առնելով քաղաքացու 2024 թվականի հունիսի 17-ի դիմումը՝ շինությունների պահպանման ու սպասարկման համար նախատեսված 2.81989 հեկտար մակերեսով հողամասը /կադաստրային ծածկագիր՝ 08-073-0114-0003/ իրեն վաճառելու մասին.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2017 թվականի փետրվարի 8-ի վճիռով /քաղաքացիական գործ՝ N ՇԴ/3732/02/16/՝ քաղաքացի Վարդան Ագունի Սաղաթելյանի սեփականության իրավունքը ճանաչված մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Ձորակապ 3-րդ փողոց, 29/5 հողամաս հասցեում գտնվող արդյունավերական նշանակության շինությունների պահպանման համար նախատեսված համայնքի սեփականություն հանդիսացող 08-073-0114-0003 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ

արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության **2.81989** հեկտար մակերեսով հողամասը, ուղղակի վաճառքով, տվյալ հողամասի կադաստրային արժեքի չափով, ընդամենը՝ **9503 030 (ինը միլիոն հինգ հարյուր երեք հազար երկու հարյուր երեսուն)** Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել քաղաքացի Վարդան Ագունի Սաղաթելյանին (անձնագիր՝ AV 0519180, տրված՝ 15.11.2022 թվականին, 022-ի կողմից, հաշվառման հասցեն՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Ձորակապ, 3-րդ փողոց, տուն 5, հետագայում՝ Գնորդ):

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյանին՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացի Հովհաննես Վանյայի Հովհաննիսյանի հետ /այսուհետև՝ քաղաքացի/ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի առուվաճառքի պայմանագիր և ապահովել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը՝ Գնորդի միջոցներով:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ- 11	Դեմ – 0	Ձեռնպահ – 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Ն. ՍԱՐՈՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	----------	----------	----------
Մ. ԵՆՈՔՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<30>> օգոստոսի 2024 թ.

քաղաք Մարալիկ